

1843 Սեպտ. 12-ին. սա հրապուրուած մերայնոց ազնիւ ընդունելութենէն ու տեղեկութիւններէն՝ մինչև անգամ կը «խնդրէ ուսուցիչ զոք ի վանացո չայերէն լեզուի վասն իր»։ (Հետագայ շրջաններու վաւերագիրք կը հաղորդեն՝ որ փափագը կատարուած է, և Հ. Ստեփան Եազրճեան քանիցս դժգոհան պալատին մէջ իբր ուսուցիչ ապրած է)։ Փոխադարձաբար վարդապետներն ալ օգտուելով Գուքսին ցոյց տուած մտերմութենէն ու բարեացակամ տրամադրութիւններէն՝ կը համարձակին իր առջեւ դնել Ուխտիս ճգնաժամային կացութիւնը, ըսելով որ դպրոցին անկախութիւնը վտանգուելու պարագային «արդեօք կարելի՞ է զնոյն գտանել մեզ ազատութիւն եթէ յանկարծ կամիցիմք զալ ի սահմանս տէրութեան ձերոյ»։ (Նմկ. Սով. Արքանօր առ Հ. Յովն. Սորկոճ. 1843 Սեպտ. 13։ Նաև առ Հ. Անտոնիոս Սոփեալեան, 1843 Սեպտ. 26)։ (Լուսաբանութեան մէջ մայրաքաղաքն էր համալուծել ինքնավար պետութեան մը՝ որ տեւեց մինչև 1847 թուականը)։

Ինչպէս կը տեսնենք՝ ասոնք կը ցուցնեն սոյն ծանր օրերուն մէջ ապրող Մխիթարեան Հայերու հոգեբանական վիճակը։

Անտեղիտալի է Վիեննայի վճիռը, և ձեռնունայն վանք կը դառնան Հ. Սարգիս և Հ. Յովհաննէս։ Դարձեալ կը գումարուի ժողովը և կը սահմանուին նոյն երկու Հայերը՝ որ այս անգամ նախ Լոնտրա երթան՝ պաշտպանութիւն խնդրելու, և յետոյ անցնին Փարիզ՝ «զննել զերակս գաղղիացւոց Պետութեան թէ կայցէ՞ նա մեզ պաշտպան, և ի լինել հարկի անոր փոխադրելոյ զդպրոցն, տացէ՞ մեզ տեղի և ազատութիւն ըստ բանի»։ («Անցք օրականք», 1844 Ապրիլ 14). (ասոր յաւակից խնդիրներէն մաս մը՝ տես աստ Մուր. Վարժ.ի Փատուա, 1837-1846ի Տարեշարք, Ծանօթ 2)։

2. Գնուած է 392,000 Ֆրանքի, իսկ նորոգութեանց ծախսերովը կը բարձրանայ մինչև 500,000-ի։ Սոյն շէնքին նկատմամբ, որ հասցէ ունի 12, Rue de Monsieur, կը գրէ Հիւրմ. Աբբահայր Փարիզէն առ Հ. Սրապիոն Պուրիսեան. «Ի վեր քան զակնկալութիւնս գոթի պալատ ամենափառաւոր և յարմար յոյժ ըստ ամենայնի ի դպրոց»։ (գր. 1846 Սեպտեմբ. 17)։

3. Թէոդորեան այս միջոցիս այլևս ոչ լոկ Տեսուչ Ռափ. Վարժարանի, այլ Մխիթարութեան Աթոռակալն ըլլալով հանդերձ (ընտրուած 1846 Յուլիս 4-ին) կը ստանձնէ միանգամայն Փարիզու նորաբաց վարժ.ին վարչութիւնը՝ նախ այդ կրկնակի հանգամանքովը 7 տարի, և ապա 3 տարի ալ լոկ վարչի պաշտօնով կը շարունակէ։ Ի սկզբանս pro-rettore = Փոխանակ - Տեսչի կը նշանակուի՝ իբրև առժամանակեայ ցնոր ընտրութիւն տեսչի, քանի որ ինքը Աթոռակալ էր։ Հետեւեալ պաշտօնագիրը կ'ըսէ. «Ուղղիչ դպրոցիդ առժամանակեայ, այն է, pro rettore, եկեսցէ ընդ հուպ Աթոռակալն մեր Վ. Հ. Սարգիս, որոյ տեղեակ գոլով և ծանօթ ամենայնի՝ տեսեալ գհաշիւս զելից և գմտից Դպրոցիդ և զդրամականս ամենայն, ի կարգի եղեալ և զկարգ դպրոցիդ, դարձցի այսրէն, մինչև իմ դարձեալ ի Հոռմայ խորհեցուք յայնժամ զայլ ոք հաստատագոյն կարգել Ուղղիչ»։ (Նմկ. Հիւրմ. Արքանօր առ Հ. Աղեքս. Պէշիկըաշլեան, Հ. Յովն. Սորկոճեան, և Հ. Ստեփ. Եազրճեան, 1846 Յուլիս 16)։ Այդ ձեւ անուանումը կը կրկնէ նաև Հ. Յովն. Սորկոճեան առ Աբբահայր գրած իր պատասխանին մէջ՝ ըսելով, «թէ եւ յառաքելն գնա այսր Prorettore անուանեալ էիք զնա»։ (գր. 1848 Նոյ. 5)։ Ուրեմն սոյն սկզբնական շրջանին Հ. Սարգիս պաշտօնը ուրիշ բան չէր՝ բայց եթէ — ըստ Գերպ. Հիւրմիզեանի խօսքերուն — «ի կարգի դնել ընդ Վ. Հ. Յովհաննու զդրամական իրօ դպրոցիդ և ճողոպրել զմեզ և զդպրոցդ ի մեծէ անձկութենէ դրամոյ յոր կայն»։ (գր. առ Հ. Յովն. Սորկ. և Հ. Ս. Եազրճ., 1846 Յուլիս 31)։ Եւ ոչ իրաւասութիւն տրուած է դեռ իրեն՝ ինքն իր կողմանէ միջամուխ ըլլալու վարժարանին ուսումնական ընթացքին. «Յուսումնական կարգաւորութիւնս դպրոցիդ չունի իշխանութիւն խառնելոյ ամենեւին, բայց որչափ դուք ինքնին եթէ հաճեսցիք հարցանել ինչ նմա խորհուրդ»։ (Անդ. ուրեմն ահա սահմանը գծուած է։ Քանի մ'ամիս վերջն է որ Հ. Սարգիս կը տրուի Տեսուչ տիտղոսը յարակից բոլոր իրաւասութիւններով. (Նմկ. Հիւրմ. Արքանօր առ Հ. Սարգիս, 1846 Հոկտ. 29)։

4. Նաև այս թուականիս՝ Վարժարանի տեսչին կը յանձնուի հոգալ «Չամենայն դրամական իրօն և գհաշիւս ելի և մտի», ու կը պատուիրուի իրեն՝ թէ Մխիթարութիւնը «գհամարսն ի ձէնջ միայն խնդրեսցէ յայսմհետէ»։ (Նմկ. Հիւրմ. Արքանօր առ Հ. Սարգիս, 1846 Հոկտեմբեր 29)։